ք. Երևան, Ս. Դավթի 87ա <<19>> հունվարի 2022թ.

Անհատ ձեռնարկատեր Դմիտրի Խուդոյան
ՀՎՀՀ 49623104 հասցե՝ Արմավիրի մարզ
Ամբերդ Մայիսյան փ. 31

**ԾԱՆՈՒՑԱԳԻՐ**

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկների, 19.01.2022 թվականի դրությամբ ԱՁ Դմիտրի Խուդոյանի դրոշմանիշային վճարի գծով չկատարված պարտավորությունը կազմում է 105.000 դրամ:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունները գանձելու վերաբերյալ <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցումը ուժի մեջ մտնելու օրվա 3-րդ օրը, ժամը 11:00-ին ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշված վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և (կամ) առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87ա:

Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ.Մաթևոսյան

հեռ. 010-30-91-91 /91-65/